

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Հայաստանի Ավտոապահովագրողների
Բյուրոյի խորհրդի 24/12/2019թ թիվ 47-Լ
որոշմամբ

Փոփոխված է

02/03/2020թ թիվ 7-Լ որոշմամբ
30/06/2020թ թիվ 23-Լ որոշմամբ
29/12/2020թ թիվ 46-Լ որոշմամբ
26/10/2021թ թիվ 38-Լ որոշմամբ
23/12/2021թ թիվ 48-Լ որոշմամբ
29/03/2022թ թիվ 7-Լ որոշմամբ
29/11/2022թ թիվ 35-Լ որոշմամբ
25/04/2023թ թիվ 16-Լ որոշմամբ
28/11/2023թ թիվ 35-Լ որոշմամբ
23/07/2024թ թիվ 22-Լ որոշմամբ
--/01/2025թ թիվ ---Լ որոշմամբ

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀՀ կենտրոնական բանկում
«14» օգոստոսի 2024թ

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ

_____ Մարտին Գալստյան

Հայաստանի Ավտոապահովագրողների
Բյուրոյի խորհրդի նախագահ

_____ Արմեն Նուրբեկյան

ԿԱՆՈՆՆԵՐ RL 1-003

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԲՅՈՒՐՈՅԻ

(ԱՊՊԱ ՈԼՈՐՏՈՒՄ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՂ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ)

ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ
ԳԼՈՒԽ 1. ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1. Սույն կանոններով սահմանվում են՝

1) ԱՊՊԱ ոլորտում փորձագետների և վերանորոգող կազմակերպությունների որակավորման կարգը, հիմքերը և պայմանները,

2) Ապահովագրողների և փորձագետների, Ապահովագրողների և վերանորոգող կազմակերպությունների միջև համագործակցության նվազագույն պահանջները, վերջինների հետ կնքման ենթակա պայմանագրերի (համաձայնագրերի) տիպային ձևերը կամ ըստ կիրառելիության՝ վերջինների գործունեությանը, որակավորմանը և մատուցվող ծառայություններին ներկայացվող պահանջները,

3) Փորձագետների և վերանորոգող կազմակերպությունների նվազագույն քանակը, որոնց հետ Ապահովագրողը պետք է ունենա մշտապես կնքված և գործող՝ սույն կանոնների պահանջներին համապատասխանող պայմանագրեր (համագործակցություն),

4) փորձագետների և վերանորոգող կազմակերպությունների նկատմամբ կիրառվող պատասխանատվության միջոցները և դրանց կիրառման կարգը:

2. Սույն կանոնները չեն տարածվում Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քրեական հետապնդման մարմինների և ավտոտրանսպորտային միջոցների մասնակցությամբ պատահարների գծով վարչական վարույթ իրականացնող մարմինների վրա: Սույն կետով նախատեսված մարմինները սույն կանոնների ուժով համարվում են Բյուրոյի կողմից տրամադրված՝ ԱՊՊԱ պատահարի առաջացման պատճառների փորձաքննություն իրականացնելու որակավորում ունեցող անձինք և ՀՀ օրենսդրությամբ իրենց վերապահված լիազորությունների շրջանակում իրավունք ունեն իրականացնելու ցանկացած տեսակի ԱՊՊԱ պատահարի պատճառների փորձաքննություն:

**ԳԼՈՒԽ 2. ԿԱՆՈՆՆԵՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ
ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

3. Սույն կանոններում օգտագործվող հասկացությունները կիրառվում են հետևյալ իմաստով՝

1) **Օրենք՝** «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք,

2) **Բյուրո՝** Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրո,

3) **Ապահովագրող՝** Բյուրոյին անդամակցող և ԱՊՊԱ պայմանագրի կնքման իրավունք ունեցող ապահովագրական ընկերություն,

4) **շարժական գույքի վնասներ գնահատող փորձագետ՝** սույն կանոնների համաձայն՝ շարժական գույքի վնասներ գնահատող փորձագետի որակավորում ունեցող անձ,

5) **անշարժ գույքի վնասներ գնահատող փորձագետ՝** սույն կանոնների համաձայն՝ անշարժ գույքի վնասներ գնահատող փորձագետի որակավորում ունեցող անձ,

6) **վնասների փորձագետ՝** շարժական գույքի վնասներ գնահատող փորձագետ և անշարժ գույքի վնասներ գնահատող փորձագետ,

7) **պատճառների փորձագետ**՝ սույն կանոնների համաձայն՝ պատահարի առաջացման պատճառների փորձագետի որակավորում ունեցող իրավաբանական անձ, ինչպես նաև «ավտոտեխնիկ», «նյութագետ» և (կամ) «հետքաբան» մասնագիտացումներով կամ դրանիցից որևէ մեկով սույն կանոնների համաձայն որակավորված ֆիզիկական անձ,

8) **փորձագետ**՝ վնասների փորձագետ և պատճառների փորձագետ,

9) **վերանորոգող կազմակերպություն**՝ ապահովագրական հատուցման գործընթացի շրջանակներում ԱՊՊԱ պատահարի հետևանքով գույքին պատճառված վնասների վերականգնում իրականացնող անձ,

10) **ֆիզիկական անձ**՝ ֆիզիկական անձ՝ բացառությամբ ֆիզիկական անձ անհատ ձեռնարկատերի: Անհատ ձեռնարկատերերի նկատմամբ տարածվում են իրավաբանական անձանց համար սահմանված կարգավորումները,

11) **ղեկավար**՝ իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավար, (ըստ է 30/06/2020թ թիվ 23-Լ)

12) **փոխկապակցված անձ**՝ համաձայն «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքով նախատեսված նշանակության: (ըստ է 30/06/2020թ թիվ 23-Լ)

4. Սույն կանոններում օգտագործված այլ հասկացություններն ունեն «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կիրառվող նշանակությունը:

**ԲԱԺԻՆ 2. ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՀԵՏ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ
ԳԼՈՒԽ 3. ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՄԲ
ՏՐՎՈՂ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

5. ԱՊՊԱ ոլորտում տրվում են փորձագետների հետևյալ տեսակի որակավորումները՝ հետևյալ իրավասություններով՝

Աղյուսակ 1

N	ԱՊՊԱ ոլորտում փորձագետների որակավորման տեսակները	Որակավորմամբ տրվող իրավասությունները
1	Շարժական գույքի վնասներ գնահատող փորձագետ	ԱՊՊԱ ոլորտում անշարժ գույքից բացի ցանկացած այլ գույքին պատճառված վնասների գնահատում
2	Անշարժ գույքի վնասներ գնահատող փորձագետ	ԱՊՊԱ ոլորտում անշարժ գույքին պատճառված վնասների գնահատում
3	Պատահարի առաջացման պատճառների փորձագետ իրավաբանական անձ պատահարի առաջացման	ԱՊՊԱ ոլորտում Բյուրոյի կանոններով սահմանված ստանդարտ հատուցման գործընթացում պատահարի առաջացման պատճառների փորձաքննության

<p>փորձագետ ֆիզիկական անձ՝ «ավտոտեխնիկ», «նյութագետ» և (կամ) «հետքաբան» մասնագիտացումներից որևէ մեկով կամ մի քանիսով</p>	<p>իրականացում (պատահարի առկայության, մեխանիզմի և դրանում մեղավորության որոշում)</p>
--	--

**ԳԼՈՒԽ 4. ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԱՀՄԱՆՎՈՂ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ
ՊԱՀԱՆՋՆԵՐԸ**

6. ԱՊՊԱ ոլորտում գույքին պատճառված վնասների գնահատում կարող են իրականացնել ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձ համարվող վնասների փորձագետները, իսկ ապահովագրական պատահարի առաջացման պատճառների փորձաքննություն՝ միայն իրավաբանական անձ համարվող պատճառների փորձագետները: Ֆիզիկական անձ համարվող պատճառների փորձագետներն ԱՊՊԱ ոլորտում ապահովագրական պատահարի առաջացման պատճառների փորձաքննություն կարող են իրականացնել միայն իրավաբանական անձ համարվող պատճառների փորձագետի կազմում և Բյուրոյի՝ պատճառների փորձաքննության գործընթացը կարգավորող կանոնների իմաստով չեն համարվում առանձին որակավորում ունեցող անձինք:

7. Փորձագետը կարող է ԱՊՊԱ ոլորտում իրականացնել փորձաքննություն հետևյալ պայմանների առկայության դեպքում՝

1) ունի սույն կանոններով սահմանված կարգով ստացված համապատասխան տեսակի որակավորում,

2) Հայաստանի Հանրապետությունում գրանցված որևէ ապահովագրական ընկերության հետ ունի կնքված և գործող իր կողմից ԱՊՊԱ ոլորտում տրվող բոլոր փորձաքննություններից բխող պատասխանատվության ռիսկը ծածկող ապահովագրության պայմանագիր (պայմանագրեր), որը (որոնք) բավարարում են սույն կետի 3-րդ ենթակետով նախատեսված համաձայնագրում նշված պահանջներին (սույն ենթակետով սահմանված պահանջը չի տարածվում ֆիզիկական անձ համարվող պատճառների փորձագետների նկատմամբ),

3) փորձաքննության պատվեր տված Ապահովագրողի (Բյուրոյի) հետ ունի սույն կանոններով սահմանված տիպային օրինակին համապատասխան կնքված և գործող համաձայնագիր (սույն ենթակետով սահմանված պահանջը չի տարածվում ֆիզիկական անձ համարվող պատճառների փորձագետների նկատմամբ),

4) սույն կետի 3-րդ ենթակետի համաձայն կնքված պատշաճ համաձայնագրի շրջանակներում Ապահովագրողի (Բյուրոյի) կողմից Բյուրոյի կանոններով սահմանված կարգով ստացել է համապատասխան պատվեր (սույն ենթակետով սահմանված պահանջը չի տարածվում ֆիզիկական անձ համարվող պատճառների փորձագետների նկատմամբ),

5) փոխկապակցված չէ պատվիրված փորձաքննությանը որևէ առնչություն ունեցող անձի (պատահարում ներգրավված ավտոտրանսպորտային միջոցի վարորդ կամ սեփականատեր, տուժող, պատահարից բխող հատուցման գործընթացում ներգրավված

կամ ներգրավման ենթակա Ապահովագրող և այլն) հետ, (փոփ. և լրաց. է 30/06/2020թ թիվ 23-Լ)

6) (Ուժը կորցրել է Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրոյի խորհրդի 23/12/2021թ թիվ 48-Լ որոշմամբ)

7) նյութագիտական հետազոտություն կատարելու վերաբերյալ պատվեր ստանալու դեպքում համապատասխան հետազոտությունների իրականացման համար ապահովել է սույն կանոնների համաձայն «նյութագետ» մասնագիտացմամբ որակավորում ունեցող անձի հետ համապատասխան պայմանագրի կնքումը:

ԳԼՈՒԽ 5. ՓՈՐՃԱԳԵՏՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

8. Փորձագետի որակավորում ստանալու համար անձը Բյուրո է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝ պատասխանատվություն կրելով այդ փաստաթղթերի իսկության և դրանցում արտացոլված տեղեկությունների՝ իրականությանը համապատասխանելու համար.

1) սույն կանոնների Հավելված 1-ով սահմանված ձևով դիմում,

2) դիմողի անձը հաստատող փաստաթղթի (իրավաբանական անձի դեպքում՝ նաև (ըստ կիրառելիության) ՀՎՀՀ-ն պարունակող փաստաթղթի, կանոնադրության և դիմողի անունից հանդես գալու իրավասությունը հավաստող փաստաթղթի) պատճենը կամ լուսապատճենը,

3) սույն կանոնների 9-րդ կետով նախատեսված պահանջներին համապատասխանության փաստը հավաստող փաստաթղթերի պատճենը կամ լուսապատճենը:

9. Փորձագետի որակավորում ստանալու համար անձը պետք է բավարարի հետևյալ պահանջներին՝

Աղյուսակ 2.1		
Որակավորման տեսակը՝ շարժական գույքի վնասներ գնահատող փորձագետ և անշարժ գույքի վնասներ գնահատող փորձագետ		
Պահանջներ և այն հիմնավորող՝ դիմումին կցվող փաստաթղթեր		
<i>Որակավորվող անձի տեսակը</i>	<i>Պահանջի նկարագրությունը</i>	<i>Հիմնավորող փաստաթուղթը</i>
Ֆիզիկական անձ	1. Բարձրագույն կրթություն	Դիպլոմ կամ պետական քննական հանձնաժողովի որոշման հիման վրա համապատասխան որակավորմամբ բարձրագույն կրթություն ստացած լինելու փաստը

	<p>2. Գույքային վնասի գնահատման բնագավառում կամ դրան հարակից բնագավառներում համապատասխան գիտելիքներ և որակավորում</p>	<p>հավաստող այլ փաստաթուղթ</p> <p>Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական փորձագետի որակավորման հանձնաժողովի կամ Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի համակարգում դատական փորձագետի որակավորման հանձնաժողովի կողմից տրված փորձագետի (դատական փորձագետի) վկայական՝ Ապրանքագիտություն փորձագիտական մասնագիտությամբ, կամ համապատասխան որակավորում տվող օտարերկրյա հեղինակավոր հաստատության կողմից տրված նմանատիպ փաստաթուղթ</p> <p>կամ</p> <p>Հայաստանի Հանրապետության կամ Արցախի Հանրապետության պետական կամ հավատարմագրված ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատության պետական նմուշի ավարտական փաստաթուղթ կամ օտարերկրյա կրթական</p>
--	---	--

		<p>հաստատության Հայաստանի Հանրապետությունում փոխճանաչված համապատասխան փաստաթուղթ՝ շուկայագիտություն և ճարտարագիտություն ուղղվածությամբ մասնագիտություններից որևէ մեկի գծով</p> <p>կամ</p> <p>Ապահովագրական ընկերության համար կամ իրավաբանական անձ համարվող վնասների փորձագետի կազմում վերջին տասը տարվա ընթացքում առնվազն երկու տարվա վնասների փորձագետի աշխատանքային փորձը հավաստող փաստաթուղթ</p>
	<p>3. Վերջին հինգ տարվա ընթացքում ապահովագրական ընկերությունում կամ գնահատման գործունեությամբ զբաղվող մասնագիտացված կազմակերպությունում առնվազն մեկ տարվա գնահատում իրականացնելու աշխատանքային փորձ</p>	<p>Համապատասխան կազմակերպության հետ կնքված աշխատանքային և (կամ) քաղաքացիաիրավական պայմանագիրը</p>

	<p>4. ՀՀ տարածքում անշարժ գույքի գնահատում իրականացնելու իրավունք (կիրառելի է միայն անշարժ գույքի վնասներ գնահատող փորձագետների համար)</p>	<p>ՀՀ իրավասու պետական մարմնի կողմից տրված անշարժ գույքի գնահատման որակավորման վկայական կամ թույլտվությունը հավաստող այլ փաստաթուղթ (ՀՀ օրենսդրությամբ նման փաստաթուղթ նախատեսված լինելու դեպքում)</p>
	<p>5. Բարելարքության պահանջներին համապատասխանություն (որակավորման փուլում ենթակա է հիմնավորման՝ Բյուրոյի պահանջով)</p>	<p>1) ՀՀ իրավասու պետական մարմնի կողմից տրված տեղեկանք՝ դիտավորությամբ կատարված հանցագործության համար դատվածության բացակայության և քրեական գործով մեղադրյալ չհանդիսանալու վերաբերյալ, 2) Որակավորվող անձին անձամբ ճանաչող փորձագիտական կամ ֆինանսական համակարգում աշխատող երեք անձի նույնականացնող տվյալներ (անուն, ազգանուն, հայրանուն, վերջին աշխատավայրն ու զբաղեցրած պաշտոնը (եթե վերջին աշխատավայրը ֆինանսական կամ փորձաքննության համակարգում չէ ապա՝ նաև այդ աշխատավայրը, պաշտոնը և աշխատելու ժամանակահատվածը), կոնտակտային</p>

		<p>հեռախոսահամար), որոնք պատրաստակամություն են հայտնել երաշխավորություն տրամադրել որակավորում ստացող անձի վերաբերյալ: Ընդ որում, անհրաժեշտ է, որպեսզի երաշխավորներից մեկը լինի երաշխավորյալի նախկին աշխատավայրից, իսկ մյուսները չլինեն այն կազմակերպության ներկայացուցիչներ, որում որակավորված անձը պետք է իրականացնի որակավորված գործունեությունը,</p> <p>3) Բյուրոյի կազմում ստեղծված կարգապահական հանձնաժողովի դրական եզրակացություն, որը տրվում է «Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրոյի կողմից իրականացվող վերահսկողության» RL 1-004 կանոններով սահմանված դրույթներին համապատասխան՝ անձի և նրա նախորդող վարքագծի վերաբերյալ ներկայացված տեղեկատվության, փաստաթղթերի և, ըստ անհրաժեշտության, իրականացված հարցազրույցի հիման վրա</p>
<p>Իրավաբանական անձ</p>	<p>1. Շարժական գույքի վնասներ գնահատող փորձագետի որակավորում ունեցող առնվազն երկու աշխատող և (կամ) քաղաքացիաիրավական</p>	<p>Համապատասխան աշխատողների ֆիզիկական անձանց հետ կնքված աշխատանքային և (կամ) քաղաքացիաիրավական պայմանագրեր</p>

	<p>հարաբերությունների մեջ գտնվող ֆիզիկական անձ կամ անշարժ գույքի վնասներ գնահատող փորձագետի որակավորում ունեցող առնվազն մեկ աշխատող և (կամ) քաղաքացիաիրավական հարաբերությունների մեջ գտնվող ֆիզիկական անձ (ըստ դիմումով ակնկալվող որակավորման տեսակի)</p>	
	<p>2. ՀՀ տարածքում անշարժ գույքի գնահատում իրականացնելու իրավունք (միայն անշարժ գույքի վնասներ գնահատող փորձագետների համար)</p>	<p>ՀՀ իրավասու պետական մարմնի կողմից տրված անշարժ գույքի գնահատման արտոնագիր կամ թույլտվությունը հավաստող այլ փաստաթուղթ (ՀՀ օրենսդրությամբ նման փաստաթուղթ նախատեսված լինելու դեպքում)</p>
	<p>3. Այլ իրավաբանական անձ համարվող վնասների փորձագետների հետ փոխկապակցվածության բացակայություն, ինչպես նաև որակավորման համար դիմած անձի ղեկավարը և բոլոր ֆիզիկական անձ փորձագետներն աշխատանքային և (կամ) քաղաքացիաիրավական հարաբերությունների մեջ չեն գտնվում որևէ Ապահովագրողի, Բյուրոյի և վնասների փորձագետի հետ (փոփ. է 30/06/2020թ թիվ 23-Լ)</p>	<p>Որակավորման համար դիմած անձի կողմից տրված հայտարարություն՝ համաձայն սույն կանոնների Հավելված 1.1-ի</p>

4. Բարեվարքության պահանջներին համապատասխանություն

- 1) Որակավորման համար դիմած անձի ղեկավարին ՀՀ իրավասու պետական մարմնի կողմից տրված տեղեկանք՝ դիտավորությանը կատարված հանցագործության համար դատվածության բացակայության և քրեական գործով մեղադրյալ չհանդիսանալու վերաբերյալ,
- 2) Որակավորման համար դիմած անձի ղեկավարին անձամբ ճանաչող փորձագիտական կամ ֆինանսական համակարգում աշխատող երեք անձի նույնականացնող տվյալներ (անուն, ազգանուն, հայրանուն, վերջին աշխատավայրն ու զբաղեցրած պաշտոնը (եթե վերջին աշխատավայրը ֆինանսական կամ փորձաքննության համակարգում չէ ապա՝ նաև այդ աշխատավայրը, պաշտոնը և աշխատելու ժամանակահատվածը), կոնտակտային հեռախոսահամար), որոնք պատրաստականություն են հայտնել երաշխավորություն տրամադրել որակավորման համար դիմած անձի ղեկավարի վերաբերյալ: Ընդ որում, անհրաժեշտ է, որպեսզի երաշխավորներից մեկը լինի երաշխավորյալի

		<p>նախկին աշխատավայրից, իսկ մյուսները չլինեն որակավորվող անձի ներկայացուցիչներ, 3) Բյուրոյի կազմում ստեղծված կարգապահական հանձնաժողովի դրական եզրակացություն, որը տրվում է «Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրոյի կողմից իրականացվող վերահսկողության» RL 1-004 կանոններով սահմանված դրույթներին համապատասխան՝ անձի, նրա ղեկավարի, ֆիզիկական անձ փորձագետների և նրանց նախորդող վարքագծի վերաբերյալ ներկայացված տեղեկատվության և, ըստ անհրաժեշտության, իրականացված հարցազրույցի հիման վրա</p>
--	--	--

Աղյուսակ 2.2

Որակավորման տեսակը՝ ավտոտեխնիկ մասնագիտացմամբ պատահարի առաջացման պատճառների փորձագետ

Պահանջներ և այն հիմնավորող՝ դիմումին կցվող փաստաթղթեր

<i>Որակավորվող անձի տեսակը</i>	<i>Պահանջի նկարագրությունը</i>	<i>Հիմնավորող փաստաթուղթը</i>
Ֆիզիկական անձ	1. Բարձրագույն կրթություն	Դիպլոմ կամ պետական քննական հանձնաժողովի որոշման հիման վրա համապատասխան որակավորմամբ բարձրագույն կրթություն ստացած լինելու փաստը հավաստող այլ փաստաթուղթ

	<p>2. Պատահարի առաջացման պատճառների փորձաքննության բնագավառում ավտոտեխնիկ մասնագիտացմամբ համապատասխան գիտելիքներ և որակավորում</p>	<p>Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական փորձագետի որակավորման հանձնաժողովի կամ Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի համակարգում դատական փորձագետի որակավորման հանձնաժողովի կողմից տրված փորձագետի (դատական փորձագետի) վկայական՝</p> <p>Ճանապարհատրանսպորտային պատահարի հանգամանքների հետազոտություն, Տրանսպորտային միջոցի տեխնիկական վիճակի հետազոտություն և Տրանսպորտային հետքաբանական հետազոտություն փորձագիտական մասնագիտություններով միաժամանակ կամ համապատասխան որակավորում տվող օտարերկրյա հեղինակավոր հաստատության կողմից տրված նմանատիպ փաստաթուղթ,</p> <p>կամ</p> <p>Հայաստանի Հանրապետության կամ Արցախի Հանրապետության</p>
--	--	--

		<p>պետական կամ հավատարմագրված ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատության կողմից տրված պետական նմուշի ավարտական փաստաթուղթ կամ օտարերկրյա կրթական հաստատության Հայաստանի Հանրապետությունում փոխճանաչված համապատասխան փաստաթուղթ՝ մետալուրգիա և մեքենաշինություն, ցամաքային և օդային փոխադրամիջոցներ ուղղվածությամբ մասնագիտություններից որևէ մեկի գծով, բացառությամբ ավիացիոն և հրթիռային տեխնիկա, զենիթահրթիռային համալիրներ մասնագիտացումներից</p> <p>կամ</p> <p>Իրավաբանական անձ համարվող պատճառների փորձագետի կազմում վերջին հինգ տարվա ընթացքում առնվազն երկու տարվա ավտոտեխնիկ մասնագիտացմամբ պատճառների փորձագետի աշխատանքային փորձը հավաստող փաստաթուղթ</p>
	<p>3. Վերջին հինգ տարվա ընթացքում</p>	<p>Համապատասխան կազմակերպության հետ</p>

	<p>ապահովագրական ընկերությունում կամ ճանապարհատրանսպորտային պատահարների առաջացման պատճառների փորձաքննությամբ զբաղվող մասնագիտացված կազմակերպությունում առնվազն մեկ տարվա պատահարի առաջացման պատճառների փորձաքննություն իրականացնելու աշխատանքային փորձ (3-րդ կետը լրաց. է 29/12/2020թ թիվ 46-Լ)</p>	<p>կնքված աշխատանքային և (կամ) քաղաքացիաիրավական պայմանագիր</p>
	<p>4. Բարելավրթության պահանջներին համապատասխանություն (որակավորման փուլում ենթակա է հիմնավորման՝ Բյուրոյի պահանջով)</p>	<p>1) ՀՀ իրավասու պետական մարմնի կողմից տրված տեղեկանք՝ դիտավորությամբ կատարված հանցագործության համար դատվածության բացակայության և քրեական գործով մեղադրյալ չհանդիսանալու վերաբերյալ, 2) Որակավորվող անձին անձամբ ճանաչող փորձագիտական կամ ֆինանսական համակարգում աշխատող երեք անձի նույնականացնող տվյալներ (անուն, ազգանուն, հայրանուն, վերջին</p>

		<p>աշխատավայրն ու զբաղեցրած պաշտոնը (եթե վերջին աշխատավայրը ֆինանսական կամ փորձաքննության համակարգում չէ ապա՝ նաև այդ աշխատավայրը, պաշտոնը և աշխատելու ժամանակահատված) կոնտակտային հեռախոսահամար), որոնք պատրաստակամությամբ ունեն հայտնել երաշխավորություն տրամադրել որակավորում ստացող անձի վերաբերյալ: Ընդ որում, անհրաժեշտ է, որպեսզի երաշխավորներից մեկը լինի երաշխավորյալի նախկին աշխատավայրից, իսկ մյուսները չլինեն այն կազմակերպության ներկայացուցիչներ, որում որակավորված անձը պետք է իրականացնի որակավորված գործունեությունը,</p> <p>3) Բյուրոյի կազմում ստեղծված կարգապահական հանձնաժողովի</p>
--	--	--

		<p>դրական եզրակացություն, որը տրվում է «Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրոյի կողմից իրականացվող վերահսկողության» RL 1-004 կանոններով սահմանված դրույթներին համապատասխան՝ անձի և նրա նախորդող վարքագծի վերաբերյալ ներկայացված տեղեկատվության, փաստաթղթերի և, ըստ անհրաժեշտության, իրականացված հարցազրույցի հիման վրա</p>
--	--	---

Աղյուսակ 2.2.1

Որակավորման տեսակը՝ նյութագետ մասնագիտացմամբ պատահարի առաջացման պատճառների փորձագետ

Պահանջներ և այն հիմնավորող՝ դիմումին կցվող փաստաթղթեր

<i>Որակավորվող անձի տեսակը</i>	<i>Պահանջի նկարագրությունը</i>	<i>Հիմնավորող փաստաթուղթը</i>
<i>Ֆիզիկական անձ</i>	1. Բարձրագույն կրթություն	Դիպլոմ կամ պետական քննական հանձնաժողովի որոշման հիման վրա համապատասխան որակավորմամբ բարձրագույն կրթություն ստացած լինելու փաստը հավաստող այլ փաստաթուղթ
	2. Պատահարի առաջացման պատճառների	Հայաստանի Հանրապետության

	<p>փորձաքննության բնագավառում նյութագետ մասնագիտացմամբ համապատասխան գիտելիքներ և որակավորում</p>	<p>արդարադատության նախարարության դատական փորձագետի որակավորման հանձնաժողովի կամ Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի համակարգում դատական փորձագետի որակավորման հանձնաժողովի կողմից տրված փորձագետի (դատական փորձագետի) վկայական՝ հետազոտություն ֆիզիկական և քիմիական մեթոդներով փորձագիտական մասնագիտությամբ, կամ համապատասխան որակավորում տվող օտարերկրյա հեղինակավոր հաստատության կողմից տրված նմանատիպ փաստաթուղթ</p> <p>կամ</p> <p>Հայաստանի Հանրապետության կամ Արցախի Հանրապետության պետական կամ հավատարմագրված ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատության կողմից տրված պետական նմուշի ավարտական փաստաթուղթ կամ օտարերկրյա կրթական հաստատության Հայաստանի</p>
--	--	---

		<p>Հանրապետությունում փոխճանաչված համապատասխան փաստաթուղթ՝ քիմիա, քիմիական տեխնոլոգիա, ֆիզիկա և կենսաբանություն ուղղվածությամբ մասնագիտություններից որևէ մեկի գծով</p> <p>կամ</p> <p>Իրավաբանական անձ համարվող պատճառների փորձագետի կազմում վերջին հինգ տարվա ընթացքում առնվազն երկու տարվա նյութագետ մասնագիտացմամբ պատճառների փորձագետի աշխատանքային փորձը հավաստող փաստաթուղթ</p>
	<p>3. Վերջին հինգ տարվա ընթացքում ապահովագրական ընկերությունում կամ ճանապարհատրանսպորտային և պատահարների առաջացման պատճառների փորձաքննությամբ զբաղվող մասնագիտացված կազմակերպությունում առնվազն մեկ տարվա պատահարի առաջացման պատճառների փորձաքննություն իրականացնելու աշխատանքային փորձ (3-րդ կետը լրաց. է 29/12/2020թ թիվ 46-Լ)</p>	<p>Համապատասխան կազմակերպության հետ կնքված աշխատանքային և (կամ) քաղաքացիաիրավական պայմանագիր</p>
	<p>4. Բարեվարքության պահանջներին համապատասխանություն</p>	<p>1) ՀՀ իրավասու պետական մարմնի կողմից տրված տեղեկանք՝</p>

	<p>(որակավորման փուլում ենթակա է հիմնավորման՝ Բյուրոյի պահանջով)</p>	<p>դիտավորությամբ կատարված հանցագործության համար դատվածության բացակայության և քրեական գործով մեղադրյալ չհանդիսանալու վերաբերյալ,</p> <p>2) Որակավորվող անձին անձամբ ճանաչող փորձագիտական կամ ֆինանսական համակարգում աշխատող երեք անձի նույնականացնող տվյալներ (անուն, ազգանուն, հայրանուն, վերջին աշխատավայրն ու զբաղեցրած պաշտոնը (եթե վերջին աշխատավայրը ֆինանսական կամ փորձաքննության համակարգում չէ ապա՝ նաև այդ աշխատավայրը, պաշտոնը և աշխատելու ժամանակահատվածը), կոնտակտային հեռախոսահամար), որոնք պատրաստականություն են հայտնել երաշխավորություն տրամադրել որակավորում ստացող անձի վերաբերյալ: Ընդ որում, անհրաժեշտ է, որպեսզի երաշխավորներից մեկը լինի երաշխավորյալի նախկին աշխատավայրից, իսկ մյուսները չլինեն այն կազմակերպության ներկայացուցիչներ, որում որակավորված անձը պետք է իրականացնի</p>
--	--	--

		<p>որակավորված գործունեությունը, 3) Բյուրոյի կազմում ստեղծված կարգապահական հանձնաժողովի դրական եզրակացություն, որը տրվում է «Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրոյի կողմից իրականացվող վերահսկողության» RL 1-004 կանոններով սահմանված դրույթներին համապատասխան՝ անձի և նրա նախորդող վարքագծի վերաբերյալ ներկայացված տեղեկատվության, փաստաթղթերի և, ըստ անհրաժեշտության, իրականացված հարցազրույցի հիման վրա</p>
--	--	---

Աղյուսակ 2.2.2

Որակավորման տեսակը՝ հետքաբան մասնագիտացմամբ պատահարի առաջացման պատճառների փորձագետ

Պահանջներ և այն հիմնավորող՝ դիմումին կցվող փաստաթղթեր

<i>Որակավորվող անձի տեսակը</i>	<i>Պահանջի նկարագրությունը</i>	<i>Հիմնավորող փաստաթուղթը</i>
<i>Ֆիզիկական անձ</i>	1. Բարձրագույն կրթություն	Դիպլոմ կամ պետական քննական հանձնաժողովի որոշման հիման վրա համապատասխան որակավորմամբ բարձրագույն կրթություն ստացած լինելու փաստը հավաստող այլ փաստաթուղթ
	2. Պատահարի առաջացման պատճառների փորձաքննության բնագավառում	Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության

	<p>հետքաբան մասնագիտացմամբ համապատասխան գիտելիքներ և որակավորում</p>	<p>դատական փորձագետի որակավորման հանձնաժողովի կամ Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի համակարգում դատական փորձագետի որակավորման հանձնաժողովի կողմից տրված փորձագետի (դատական փորձագետի) վկայական՝ հետքաբանություն փորձագիտական մասնագիտությամբ, կամ համապատասխան որակավորում տվող օտարերկրյա հեղինակավոր հաստատության կողմից տրված նմանատիպ փաստաթուղթ</p> <p>կամ</p> <p>Հայաստանի Հանրապետության կամ Արցախի Հանրապետության պետական կամ հավատարմագրված ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատության կողմից տրված պետական նմուշի ավարտական փաստաթուղթ կամ օտարերկրյա կրթական հաստատության Հայաստանի Հանրապետությունում փոխճանաչված համապատասխան փաստաթուղթ՝ իրավունք,</p>
--	--	--

		<p>միջոլորտային մասնագիտություններ և ֆիզիկա ուղղվածությամբ մասնագիտություններից որևէ մեկի գծով</p> <p>կամ</p> <p>Իրավաբանական անձ համարվող պատճառների փորձագետի կազմում վերջին հինգ տարվա ընթացքում առնվազն երկու տարվա հետքաբան մասնագիտացմամբ պատճառների փորձագետի աշխատանքային փորձը հավաստող փաստաթուղթ</p>
	<p>3. Վերջին հինգ տարվա ընթացքում ապահովագրական ընկերությունում կամ ճանապարհատրանսպորտային պատահարների առաջացման պատճառների փորձաքննությամբ զբաղվող մասնագիտացված կազմակերպությունում առնվազն մեկ տարվա պատահարի առաջացման պատճառների փորձաքննություն իրականացնելու աշխատանքային փորձ (3-րդ կետը լրաց. է 29/12/2020թ թիվ 46-Լ)</p>	<p>Համապատասխան կազմակերպության հետ կնքված աշխատանքային և (կամ) քաղաքացիաիրավական պայմանագիր</p>
	<p>4. Բարեվարքության պահանջներին</p>	<p>1) ՀՀ իրավասու պետական մարմնի կողմից</p>

	<p>համապատասխանություն (որակավորման փուլում ենթակա է հիմնավորման՝ Բյուրոյի պահանջով)</p>	<p>տրված տեղեկանք՝ դիտավորությամբ կատարված հանցագործության համար դատվածության բացակայության և քրեական գործով մեղադրյալ չհանդիսանալու վերաբերյալ,</p> <p>2) Որակավորվող անձին անձամբ ճանաչող փորձագիտական կամ ֆինանսական համակարգում աշխատող երեք անձի նույնականացնող տվյալներ (անուն, ազգանուն, հայրանուն, վերջին աշխատավայրն ու զբաղեցրած պաշտոնը (եթե վերջին աշխատավայրը ֆինանսական կամ փորձաքննության համակարգում չէ ապա՝ նաև այդ աշխատավայրը, պաշտոնը և աշխատելու ժամանակահատվածը), կոնտակտային հեռախոսահամար), որոնք պատրաստակամություն են հայտնել երաշխավորություն տրամադրել որակավորում ստացող անձի վերաբերյալ: Ընդ որում, անհրաժեշտ է, որպեսզի երաշխավորներից մեկը լինի երաշխավորյալի նախկին աշխատավայրից, իսկ մյուսները չլինեն այն կազմակերպության ներկայացուցիչներ, որում որակավորված անձը պետք է իրականացնի</p>
--	--	--

		<p>որակավորված գործունեությունը, 3) Բյուրոյի կազմում ստեղծված կարգապահական հանձնաժողովի դրական եզրակացություն, որը տրվում է «Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրոյի կողմից իրականացվող վերահսկողության» RL 1-004 կանոններով սահմանված դրույթներին համապատասխան՝ անձի և նրա նախորդող վարքագծի վերաբերյալ ներկայացված տեղեկատվության, փաստաթղթերի և, ըստ անհրաժեշտության, իրականացված հարցազրույցի հիման վրա</p>
Աղյուսակ 2.2.3		
Որակավորման տեսակը՝ պատահարի առաջացման պատճառների փորձագետ		
Պահանջներ և այն հիմնավորող՝ դիմումին կցվող փաստաթղթեր		
<i>Որակավորվող անձի տեսակը</i>	<i>Պահանջի նկարագրությունը</i>	<i>Հիմնավորող փաստաթուղթը</i>

<p>Իրավաբանական անձ</p>	<p>1. Պատճառների փորձագետի համապատասխան որակավորում ունեցող՝ սույն կանոնների 7-րդ կետով սահմանված պահանջներին բավարարող առնվազն չորս աշխատող և (կամ) քաղաքացիաիրավական հարաբերությունների մեջ գտնվող ֆիզիկական անձ, որոնցից առնվազն երեքը պետք է ունենան ավտոտեխնիկի մասնագիտացում և առնվազն մեկը հետքաբանի մասնագիտացում</p>	<p>Համապատասխան անձանց հետ կնքված աշխատանքային և (կամ) քաղաքացիաիրավական պայմանագրեր և այդ անձանց գրավոր հայտարարությունները՝ համաձայն սույն կանոնների Հավելված 1.2-ի</p>
	<p>2. Ճանապարհատրանսպորտային պատահարների համար Բյուրոյի կանոնների համաձայն հավաքագրվող ելակետային տվյալների հիման վրա վթարի մեխանիզմը վերականգնելու՝ միջազգայնորեն ճանաչված ծրագրի առկայություն և այդ ծրագիրն օգտագործելու թույլտվություն</p>	<p>Համապատասխան թույլտվություն (լիցենզիա), ինչպես նաև տեղեկանք, որում նկարագրվում է ծրագրային համակարգի աշխատանքի մեխանիզմը և համաձայնություն է տրվում առ այն, որ Բյուրոն կամ ՀՀ կենտրոնական բանկը ցանկացած ժամանակ կարող է ստուգել տեղեկանքում նշված մեխանիզմով ծրագրային համակարգի աշխատանքը</p>

	<p>3. Իրավաբանական անձի աշխատող կամ քաղաքացիաիրավական հարաբերությունների մեջ գտնվող ավտոտեխնիկ մասնագիտացմամբ պատահարի առաջացման պատճառների փորձագետների կողմից ճանապարհատրանսպորտային պատահարների համար հավաքագրվող ելակետային տվյալների հիման վրա վթարի մեխանիզմը վերականգնելու համար տվյալ կազմակերպության կողմից կիրառվելիք ծրագրին պատշաճ տիրապետում</p>	<p>Հատուկ այդ նպատակով Բյուրոյի գործադիր տնօրենի կողմից ստեղծված աշխատանքային խմբի կողմից համապատասխան անձանց տրված դրական եզրակացություն, որը տրամադրվում է ԱՊՊԱ ոլորտում գրանցված որևէ պատահարի (որի գծով առկա է պատահարի ամբողջական տեսագրություն) ելակետային տվյալների հիման վրա նրանց կողմից ծրագրի միջոցով վերարտադրված (ստացված) վթարի մեխանիզմը տեսագրության հետ համադրելու արդյունքում</p>
	<p>4. Այլ իրավաբանական անձ համարվող պատճառների փորձագետների հետ փոխկապակցվածության բացակայություն, ինչպես նաև որակավորման համար դիմած անձի ղեկավարը և բոլոր ֆիզիկական անձ փորձագետները (բացառությամբ կոնկրետ պատվերի գծով մեկանգամյա նյութագիտական փորձաքննություն իրականացնող փորձագետների) աշխատանքային և (կամ) քաղաքացիաիրավական հարաբերությունների մեջ չեն գտնվում որևէ</p>	<p>Որակավորման համար դիմած անձի կողմից տրված հայտարարություն՝ համաձայն սույն կանոնների Հավելված 1.1-ի</p>

	<p>Ապահովագրողի, Բյուրոյի և պատճառների փորձագետի հետ</p>	
	<p>5. Փորձագետների անկախության ապահովման և աշխատանքի արդյունավետ կազմակերպման սկզբունքների և ռիսկերի կառավարման ներքին համակարգերի առկայություն</p>	<p>Իրավաբանական անձի ներքին իրավական ակտեր, որոնցով կարգավորվում են համապատասխան հարցերը</p>
	<p>6. Բարեվարքության պահանջներին համապատասխանություն</p>	<p>1) Որակավորման համար դիմած անձի ղեկավարին << իրավասու պետական մարմնի կողմից տրված տեղեկանք՝ դիտավորությամբ կատարված հանցագործության համար դատվածության բացակայության և քրեական գործով մեղադրյալ չհանդիսանալու վերաբերյալ,</p> <p>2) Որակավորման համար դիմած անձի ղեկավարին անձամբ ճանաչող փորձագիտական կամ ֆինանսական համակարգում աշխատող երեք անձի</p>

		<p>նույնականացնող տվյալներ (անուն, ազգանուն, հայրանուն, վերջին աշխատավայրն ու զբաղեցրած պաշտոնը (եթե վերջին աշխատավայրը ֆինանսական կամ փորձաքննության համակարգում չէ ապա՝ նաև այդ աշխատավայրը, պաշտոնը և աշխատելու ժամանակահատվածը), կոնտակտային հեռախոսահամար), որոնք պատրաստակամություն են հայտնել երաշխավորություն տրամադրել որակավորման համար դիմած անձի ղեկավարի վերաբերյալ: Ընդ որում, անհրաժեշտ է, որպեսզի երաշխավորներից մեկը լինի երաշխավորյալի նախկին աշխատավայրից, իսկ մյուսները չլինեն որակավորվող անձի ներկայացուցիչներ,</p> <p>3) Բյուրոյի կազմում ստեղծված կարգապահական հանձնաժողովի դրական եզրակացություն, որը տրվում է «Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրոյի կողմից իրականացվող վերահսկողության» RL 1-004 կանոններով սահմանված դրույթներին համապատասխան՝ անձի, նրա ղեկավարի ֆիզիկական անձ փորձագետների և նրանց նախորդող</p>
--	--	--

		վարքագծի վերաբերյալ ներկայացված տեղեկատվության և, ըստ անհրաժեշտության, իրականացված հարցազրույցի հիման վրա
--	--	---

10. Որակավորման համար դիմումը և սույն կանոնների 8-րդ կետով նախատեսված մյուս փաստաթղթերն ստանալուց հետո՝ երկու ամսվա ընթացքում, բացառությամբ սույն կանոնների 14-րդ կետով նախատեսված դեպքերի, Բյուրոն կազմակերպում է աղյուսակ 3-ով նախատեսված գործողությունները, որոնց դրական արդյունքի դեպքում անձը համարվում է Բյուրոյի խորհրդի կողմից համապատասխան տեսակի որակավորումն ստացած: Ներկայացված փաստաթղթերի իսկությունը և դրանցում արտացոլված տեղեկությունների՝ իրականությանը համապատասխանելու փաստն ստուգելու նպատակով Բյուրոն կամ ՀՀ կենտրոնական բանկը կարող է պահանջել և ստուգել դրանց բնօրինակները և այլ փաստաթղթեր, որի դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը հաշվարկվում է համապատասխան փաստաթղթերը (բնօրինակները) ներկայացնելու օրվանից:

Աղյուսակ 3

N	Որակավորման տեսակը	Որակավորման գործընթացը		Դրական համարվող արդյունքը
1	Շարժական գույքի վնասներ գնահատող փորձագետ և անշարժ գույքի վնասներ գնահատող փորձագետ	Ֆիզիկական անձանց համար	Աղյուսակ 2.1-ով համապատասխան որակավորման տեսակի համար սահմանված պահանջների համապատասխանության ստուգում	Սահմանված պահանջներին համապատասխանելու վերաբերյալ Բյուրոյի կողմից տրված դրական եզրակացություն
	Շարժական գույքի վնասներ գնահատող փորձագետ	Իրավաբանական անձանց համար	Հավելված 3-ով սահմանված թեմաներով իրավաբանական անձի ղեկավարի (անհատ ձեռնարկատիրոջ կամ վերջինի մոտ ղեկավարի պարտականություններն իրականացնող անձի) հարցազրույց Բյուրոյի խորհրդի նիստում	Բյուրոյի խորհրդի դրական որոշում

1	Պատահարի առաջացման պատճառների փորձագետ	Ֆիզիկական անձ	Աղյուսակ 2.2.1-ով և 2.2.2-ով համապատասխան որակավորման տեսակի համար սահմանված պահանջների համապատասխանություն	Սահմանված պահանջներին համապատասխանելու վերաբերյալ Բյուրոյի կողմից տրված դրական եզրակացություն
		Իրավաբանական անձ	Հավելված 3-ով սահմանված թեմաներով իրավաբանական անձի ղեկավարի (անհատ ձեռնարկատիրոջ կամ վերջինի մոտ ղեկավարի պարտականություններն իրականացնող անձի) հարցազրույց Բյուրոյի խորհրդի նիստում	Բյուրոյի խորհրդի դրական որոշում

11. Փորձագետի որակավորումը տրվում է ֆիզիկական անձանց համար՝ երեք տարի ժամկետով, իսկ իրավաբանական անձանց համար՝ անժամկետ:

12. Սույն կանոններով նախատեսված կարգով անձին որակավորելուն հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում Բյուրոն որակավորված անձի էլեկտրոնային փոստի հասցեին է ուղարկում որակավորման վկայականի էլեկտրոնային տարբերակը, ինչպես նաև իր պաշտոնական ինտերնետային կայքի «Փորձագետներ» բաժնում հրապարակում է որակավորված անձի անունը, ազգանունը (անվանումը) և որակավորման տեսակը: Ընդ որում, անձին տրված որակավորումը հավաստվում է նշված տեղեկատվության հրապարակմամբ:

13. Որակավորման համար դիմած և սույն կանոններով սահմանված կարգով դրական արդյունքներ չապահոված անձանց ծանուցվում է դիմումը մերժելու մասին՝ ֆիզիկական անձանց մասով՝ Բյուրոյի գործադիր տնօրենի կողմից տրված բացասական եզրակացությունը, իսկ իրավաբանական անձանց մասով՝ Բյուրոյի խորհրդի բացասական որոշումը ծանուցելու միջոցով:

14. Բյուրոն, առանց աղյուսակ 3-ով նախատեսված գործողությունները կազմակերպելու, համապատասխան գրությամբ մերժում է անձին որակավորման տրամադրումը, եթե՝

1) դիմումը կամ դրան կից ներկայացված փաստաթղթերը կամ դրանցում արտացոլված տվյալները լիարժեք, արժանահավատ կամ ամբողջական չեն կամ չեն համապատասխանում սույն կանոններով նախատեսված պահանջներին (իրավաբանական անձ դիմումատուների մասով),

2) անձը սույն կանոնների 13-րդ կետի համաձայն իրավունք չունի որակավորման համար,

3) անձը դիմելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում զրկվել է Բյուրոյի կողմից տրված որևէ տեսակի որակավորումից,

4) նա չի մասնակցել հարցազրույցին:

ԳԼՈՒԽ 6. ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐՋԻՆՆԵՐԻ ՀԵՏ ԿՆՔՈՂ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՀԱՆՋՆԵՐ

15. Ապահովագրողները և Բյուրոն իրենց հետ համագործակցող՝ վնասների փորձագետների հետ պետք է ունենան վերջինների հետ կնքված պայմանագրի (աշխատանքային կամ ծառայությունների մատուցման) մաս հանդիսացող գործող համաձայնագիր, համապատասխանաբար՝

1) Հավելված 4.1-ով սահմանված ձևով՝ ֆիզիկական անձ փորձագետների հետ կնքված պայմանագրերի մասով, կամ,

2) Հավելված 4.2-ով սահմանված ձևով՝ իրավաբանական անձ փորձագետների հետ կնքված պայմանագրերի մասով:

15.1. Ապահովագրողները փորձագետի բանավոր կամ գրավոր դիմումի (պահանջի) համաձայն՝ պարտավոր են ողջամիտ ժամկետում հիմնավորված ապահովագրավճարի դիմաց վերջինի հետ կնքել Բյուրոյի կողմից սահմանված և Ապահովագրողներին և իրավաբանական անձ փորձագետներին ծանուցված նվազագույն պահանջներին համապատասխանող փորձագետի պատասխանատվության ռիսկը ծածկող ապահովագրության պայմանագիր:

16. Պատճառների փորձագետները իրենց կողմից մատուցվող ծառայությունների գնային հրապարակային առաջարկը և դրա փոփոխությունները ներկայացնում են սույն կանոնների Հավելված 2-ով սահմանված ձևին համապատասխան՝ դրանք միաժամանակ ուղարկելով Բյուրոյին և Ապահովագրողներին: Ընդ որում սույն կետով նախատեսված առաջարկը (փոփոխությունները)՝

1) պետք է միևնույնը լինի բոլոր Ապահովագրողների համար,

2) Բյուրոյին և Ապահովագրողներին ներկայացնելուց (սահմանված կարգով ծանուցված փոփոխությունների ուժի մեջ մտնելուց) հետո՝ տվյալ փորձագետին Բյուրոյի կանոնների համաձայն ԱՊՊԱ ոլորտում պատահարի առաջացման փորձաքննության իրականացման պատվեր ցանկացած եղանակով ներկայացվելու դեպքում համարվում է, որ պատճառների փորձագետը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 454-րդ հոդվածի համաձայն՝ ստացել է Բյուրոյի և Ապահովագրողների ակցեպտը, և նրանց միջև կնքվել է (փոփոխվել է) ԱՊՊԱ պատահարի առաջացման պատճառների փորձաքննության իրականացման ծառայությունների մատուցման պայմանագիր (պայմանագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ համաձայնագիր)՝ համապատասխան գնացուցակով և սույն կանոնների 4.3-րդ հավելվածում նշված իրավունքներով և պարտավորություններով: Փորձագետը պարտավոր է Բյուրոյի և Ապահովագրողների հետ հարաբերություններում ԱՊՊԱ պատահարների առաջացման փորձաքննության միևնույն տեսակի ծառայությունների մատուցման ժամանակ կիրառել սույն կետի համաձայն ներկայացված (փոփոխված) միևնույն գնային առաջարկը,

3) պետք է կլորացված լինի մինչև մեկ հազար ՀՀ դրամը, (լրաց. է 30/06/2020թ թիվ 23-Լ)

4) պետք է նշում պարունակի համապատասխան առաջարկի (փոփոխությունների) ուժի մեջ մտնելու ժամկետի վերաբերյալ, որը չի կարող ավելի շուտ լինել, քան ուղարկվելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Ընդ որում, սույն ենթակետով նախատեսված ժամկետում Բյուրոյի կողմից համապատասխան վիճակագրական տվյալների վրա հիմնված հստակ հաշվարկներ և հիմնավորումներ պահանջվելու դեպքում առաջարկը (փոփոխությունը) չի կարող ուժի մեջ մտնել նախքան դրան Բյուրոյի գրավոր համաձայնության տրամադրումը:

~~16.1. Ապահովագրողի կողմից պատահարի առաջացման պատճառների փորձաքննության պատվեր չի կարող տրվել իրավաբանական անձ համարվող պատճառների փորձագետին, եթե առկա է հետևյալ հանգամանքներից որևէ մեկը.~~

~~տվյալ փորձագետի կողմից կազմված փորձագիտական եզրակացությունների գծով վերջին մեկ տարվա ընթացքում ավելի քան երեք անգամ նշանակվել է ստուգիչ փորձաքննություն, որոնցից առնվազն 1/2-ով արձանագրվել է տվյալ փորձագիտական կազմակերպության եզրակացության մեջ «Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրոյի կողմից իրականացվող վերահսկողության» RL 1 004 կանոններով նախատեսված շեղումներից որևէ մեկի առկայությունը, կամ~~

~~տվյալ պատվերի տրամադրմամբ պատվերի ներկայացմանը նախորդող երեսուն օրվա ընթացքում տվյալ Ապահովագրողի կողմից տվյալ իրավաբանական անձ համարվող պատճառների փորձագետին ներկայացված պատվերների քանակը կգերազանցի պատվերների առավելագույն թույլատրելի քանակը, որը հաշվարկվում է Պատահարի առաջացման պատճառների փորձաքննության պատվերները սահմանված պահանջներին բավարարող գնառաջարկներ տրամադրած փորձագետների միջև բաշխվում են Ավտոտրանսպորտային միջոցների միասնական պատուհան համակարգի կողմից ինքնաշխատ եղանակով՝ հետևյալ բանաձևի հիման վրա.~~

Բանաձևը	Բանաձևում կատարված նշանակումները	Նշանակումների բացատրությունը
$M_{\text{Ա.Բ}} = M_{\text{Ը.Բ}} * (g - 0,02 * \text{ՍՓ})$	$M_{\text{Ա.Բ}}$	Ապահովագրողի կողմից տվյալ փորձագետին ներկայացման ենթակա պատվերների առավելագույն թույլատրելի քանակ
	$M_{\text{Ը.Բ}}$	Պատվերի ներկայացմանը նախորդող երեսուն օրվա ընթացքում տվյալ Ապահովագրողի կողմից նշանակված պատահարի առաջացման պատճառների փորձաքննությունների

		պատվերների ընդհանուր քանակ
	g	Գործակից՝ հիմնված տվյալ փորձագետի հետ աշխատանքային և (կամ) քաղաքացիաիրավական հարաբերությունների մեջ գտնվող՝ պատճառների ֆիզիկական անձ փորձագետների քանակից: Ընդ որում, 5 և ավելի փորձագետի դեպքում այդ գործակիցը հավասար է 0,35-ի, 4 փորձագետի դեպքում՝ 0,3-ի, իսկ 3 փորձագետի դեպքում՝ 0,25-ի
	վփ	Վերջին մեկ տարվա ընթացքում կատարված ստուգիչ փորձաքննությունների քանակ, որոնցով տվյալ փորձագետի կողմից կազմված փորձագիտական եզրակա ցությունում արձանագրվել է «Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրոյի կողմից իրականացվող վերահսկողության» RL 1-004 կանոններով նախատեսված շեղումներից որևէ մեկը

<u>Բանաձևը</u>	<u>Բանաձևում կատարված նշանակումները</u>	<u>Նշանակումների բացատրությունը</u>
$Q_j - E_j = \min(Q_i - E_i)$ <i>որտեղ</i>	Q_i	<u>Պատվերի ներկայացման պահի դրությամբ i-րդ փորձագետի փաստացի մասնաբաժինն է պատվերի ներկայացման</u>

$Q_i = \frac{A_i}{c_{\text{ընդամենը}}}$ $E_i = \frac{\sum_{k=1}^G w_k f(i, k)}{\sum_{i=1}^N \sum_{k=1}^G w_k f(i, k)}$		ամսվա ընթացքում բոլոր պատճառների փորձագետներին ներկայացված պատվերների քանակում
	A_i	Պատվերի ներկայացման պահի դրությամբ i-րդ փորձագետին պատվերի ներկայացման ամսվա ընթացքում փաստացի տրամադրված պատվերների քանակն է
	$c_{\text{ընդամենը}}$	Պատվերի ներկայացման պահի դրությամբ i-րդ փորձագետին պատվերի ներկայացման ամսվա ընթացքում բոլոր պատճառների փորձագետներին տրամադրված պատվերների քանակն է
	G	Պատվերների բաշխվածության վրա ազդող գործոնների քանակն է
	w_k	k-րդ գործոնի կշիռն է, ընդ որում $\sum_{k=1}^G w_k = 1$
	$f(i, k)$	<p>k-րդ գործոնի դեպքում i-րդ փորձագետին տրվող արժեքն է</p> <p>Գործոն 1՝ խախտումների քանակ (սույն բանաձևի իմաստով համարվում է կատարված պատասխանատվության միջոցն ընդունվելու օրվա դրությամբ)</p> $f(i, 1) = \begin{cases} 1, & \text{եթե ընթացիկ ամսվան նախորդող 12 ամիսների ընթացքում խախտումների քանակը} = 0 \\ 0.7, & \text{եթե ընթացիկ ամսվան նախորդող 12 ամիսների ընթացքում խախտումների քանակը} = 1 \\ 0.4, & \text{եթե ընթացիկ ամսվան նախորդող 12 ամիսների ընթացքում խախտումների քանակը} = 2 \\ 0, & \text{եթե ընթացիկ ամսվան նախորդող 12 ամիսների ընթացքում խախտումների քանակը} \geq 3, \\ & \text{կամ եթե որակավորվել է ընթացիկ ամսվան նախորդող 12 ամիսների ընթացքում} \end{cases}$ <p>Կշիռ՝ $w_1 = 0.25$</p> <p>Գործոն 2՝ փորձարձնության արժեք (զին)</p> $f(i, 2) = \begin{cases} 1, & \text{եթե սահմանված զինը} \leq \text{percentile}(25) \\ 0.7, & \text{եթե } \text{percentile}(25) < \text{սահմանված զինը} \leq \text{percentile}(50) \\ 0.4, & \text{եթե } \text{percentile}(50) < \text{սահմանված զինը} \leq \text{percentile}(75) \\ 0, & \text{եթե սահմանված զինը} > \text{percentile}(75) \end{cases}$ <p>Կշիռ՝ $w_2 = 0.25$</p> <p>Գործոն 3՝ փորձագետի որակավորման փորձ (որակավորումն ստանալուց հետո անցած ոչ ամբողջական տարիները կտրացվում են դեպի ներքև)</p> $f(i, 3) = \begin{cases} 1, & \text{եթե որակավորված տարիների քանակը} \geq 5 \\ 0.7, & \text{եթե որակավորված տարիների քանակը} \in (3; 5) \\ 0.4, & \text{եթե որակավորված տարիների քանակը} \in [1; 3] \\ 0.1, & \text{եթե որակավորված տարիների քանակը} < 1 \end{cases}$ <p>Որակավորման փորձ՝ $w_3 = 0,25$</p> <p>Գործոն 4՝ կրկնակի փորձարձնությունների մասնաբաժին</p> $f(i, 4) = \begin{cases} 0.5, & \text{եթե իր կողմից ընթացիկ ամսվան նախորդող 12 ամիսների ընթացքում տրված փորձագիտական եզրակացությունների գծով ներկայացված կրկնակի փորձարձնությունների քանակի մասնաբաժինը իր կողմից նույն ժամանակահատվածում իրականացված բոլոր ստացնային փորձարձնությունների մեջ} \leq \text{percentile}(25) \\ 0.3, & \text{եթե } \text{percentile}(25) < \text{իր կողմից ընթացիկ ամսվան նախորդող 12 ամիսների ընթացքում տրված փորձագիտական եզրակացությունների գծով ներկայացված կրկնակի փորձարձնությունների քանակի մասնաբաժինը իր կողմից նույն ժամանակահատվածում իրականացված բոլոր ստացնային փորձարձնությունների մեջ} \leq \text{percentile}(50) \\ 0.2, & \text{եթե } \text{percentile}(50) < \text{իր կողմից ընթացիկ ամսվան նախորդող 12 ամիսների ընթացքում տրված փորձագիտական եզրակացությունների գծով ներկայացված կրկնակի փորձարձնությունների քանակի մասնաբաժինը իր կողմից նույն ժամանակահատվածում իրականացված բոլոր ստացնային փորձարձնությունների մեջ} \leq \text{percentile}(75) \\ 0, & \text{եթե իր կողմից ընթացիկ ամսվան նախորդող 12 ամիսների ընթացքում տրված փորձագիտական եզրակացությունների գծով ներկայացված կրկնակի փորձարձնությունների քանակի մասնաբաժինը իր կողմից նույն ժամանակահատվածում իրականացված բոլոր ստացնային փորձարձնությունների մեջ} > \text{percentile}(75), \text{ կամ եթե որակավորվել է ընթացիկ ամսվան նախորդող 12 ամիսների ընթացքում} \end{cases}$

		<p> <math>f_i(t, 4) = \begin{cases} 0.5, & \text{եթե իր կողմից ընթացիկ ամսվան նախորդող 12 ամիսների ընթացքում տրված փորձագիտական եզրակացությունների գծով ներկայացված կրկնակի փորձաքննությունների քանակի մեջ կրկնակի փորձաքննությանը փոփոխված եզրակացությունների մասնաբաժինը \leq percentile(25)} \\ 0.3, & \text{եթե percentile(25) < իր կողմից ընթացիկ ամսվան նախորդող 12 ամիսների ընթացքում տրված փորձագիտական եզրակացությունների գծով ներկայացված կրկնակի փորձաքննությունների քանակի մեջ կրկնակի փորձաքննությանը փոփոխված եզրակացությունների մասնաբաժինը \leq percentile(50)} \\ 0.2, & \text{եթե percentile(50) < իր կողմից ընթացիկ ամսվան նախորդող 12 ամիսների ընթացքում տրված փորձագիտական եզրակացությունների գծով ներկայացված կրկնակի փորձաքննությունների քանակի մեջ կրկնակի փորձաքննությանը փոփոխված եզրակացությունների մասնաբաժինը \leq percentile(75)} \\ 0, & \text{իր կողմից ընթացիկ ամսվան նախորդող 12 ամիսների ընթացքում տրված փորձագիտական եզրակացությունների գծով ներկայացված կրկնակի փորձաքննությունների քանակի մեջ կրկնակի փորձաքննությանը փոփոխված եզրակացությունների մասնաբաժինը > percentile(75), կամ եթե որակավորվել է ընթացիկ ամսվան նախորդող 12 ամիսների ընթացքում} \end{cases}</math> </p> <p> $w_4 = 0.25$ </p>
--	--	---

16.2. Ապահովագրողի կողմից գույքին պատճառված վնասների փորձաքննության պատվեր չի կարող տրվել այնպիսի փորձագետի, որի կողմից կազմված փորձագիտական եզրակացությունների գծով վերջին մեկ տարվա ընթացքում ավելի քան երեք անգամ նշանակվել է ստուգիչ փորձաքննություն, որոնցից առնվազն 1/2-ով արձանագրվել է տվյալ փորձագետի եզրակացության մեջ «Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրոյի կողմից իրականացվող վերահսկողության» RL 1-004 կանոններով նախատեսված շեղումներից որևէ մեկի առկայությունը:

17. Բյուրոն և Ապահովագրողները պարտավոր են սույն կանոններին համապատասխան համագործակցել առնվազն 2 շարժական գույքի վնասներ գնահատող փորձագետի և առնվազն 1 անշարժ գույքի վնասներ գնահատող փորձագետի հետ:

18. Բյուրոն կրկնակի փորձաքննություն նշանակելիս փորձաքննության պատվերը չի կարող տալ այնպիսի փորձագետի, որի գծով առկա է հետևյալ հանգամանքներից որևէ մեկը (սույն արգելքը կարող է չպահպանվել, բայց ոչ ավել քան վեց ամիս ժամկետով, եթե դրա պահպանման դեպքում փորձաքննության պատվեր հնարավոր չի լինի ներկայացնել կամ հնարավոր կլինի ներկայացնել միայն մեկ փորձագետի):

1) տվյալ փորձագետի կողմից կազմված փորձագիտական եզրակացությունների գծով վերջին մեկ տարվա ընթացքում ավելի քան երեք անգամ նշանակվել է ստուգիչ փորձաքննություն, որոնցից առնվազն 1/2-ով արձանագրվել է տվյալ փորձագետի եզրակացության մեջ «Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրոյի կողմից իրականացվող վերահսկողության» RL 1-004 կանոններով նախատեսված շեղումներից որևէ մեկի առկայությունը, կամ

2) ~~պատվերի ներկայացմանը նախորդող երեսույն օրվա ընթացքում որևէ Ապահովագրողի կողմից տվյալ փորձագետին ներկայացված պատվերների ընդհանուր քանակը կազմում է այդ Ապահովագրողի կողմից նշված ժամանակահատվածում նշանակված պատահարի առաջացման պատճառների փորձաքննությունների պատվերների ընդհանուր քանակի ավելի քան 20 տոկոսը:~~

19. Փորձաքննության պատվեր ներկայացրած, ինչպես նաև ինքնաշխատ պատվերով սույն կանոններով սահմանված կարգով վճարման պարտավորություն ունեցող Ապահովագրողները և Բյուրոն պարտավոր են փորձագետի կողմից Բյուրոյի կանոնների համաձայն տրված փորձագիտական եզրակացությունների դիմաց (ներառյալ՝ հետքաբանական և (կամ) նյութագիտական հետազոտություն կատարելու առաջադրանքի գծով, որի համար Բյուրոյի կանոնների համաձայն՝ տրվել է անհնարինության մասին գրավոր պատասխան, սակայն իրականացվել է պատահարում ներգրավված առնվազն մեկ ավտոտրանսպորտային միջոցի զննություն) վճարել սույն կանոններով նախատեսված համապատասխան գնացուցակով նախատեսված ծառայության վճարն ոչ ուշ, քան վերջինի

կողմից դուրս գրված հարկային հաշվի ամսաթվին հաջորդող ամսվա երրորդ աշխատանքային օրը: (լրաց. է 29/12/2020թ թիվ 46-Լ)

20. Ապահովագրողները և Բյուրոն պատասխանատվություն են կրում իրենց հետ համագործակցող փորձագետների հետ՝ սույն կանոնների 15-րդ կետով նախատեսված՝ համապատասխան պայմանագրերի և համաձայնագրերի կնքման ապահովման գործընթացի համար և համապատասխանաբար դրա չկնքման կամ նշված պահանջներին չհամապատասխանող համաձայնագրերի կնքման հետևանքով, ինչպես նաև մատուցված ծառայությունների դիմաց սույն կանոնների 19-րդ կետով սահմանված կարգով և չափով վճարումների չկատարման հետևանքով առաջացող բացասական հետևանքների ռիսկերը՝ ներառյալ ֆինանսական ռիսկերը:

21. Փորձագետները սույն կանոններով նախատեսված կարգով որակավորման դիմում ներկայացնելու և որակավորումն ստանալու ուժով պարտավորություն են ստանձնում որակավորված գործունեության իրականացման ամբողջ ընթացքում համապատասխանել սույն կանոններով համապատասխան որակավորումն ստանալու համար սահմանված պահանջներին և լիակատար պատասխանատվություն են կրում սույն կանոններով, Բյուրոյի այլ կանոններով, ինչպես նաև սույն կանոնների համաձայն՝ իրենց հետ կնքված համաձայնագրերով կամ իրենց կողմից ստանձնած գրավոր պարտավորություններով իրենց գործունեությանը ներկայացված պահանջների պահպանման և համապատասխանաբար դրա չպահպանման արդյունքում պատճառված վնասների հատուցման համար: Փորձագետները սույն կետով նախատեսված պատասխանատվությունը (Բյուրոյի կանոններով սահմանված պահանջների և դրույթների պահպանման) կրում են ինչպես Ապահովագրողների և Բյուրոյի, այնպես էլ ՀՀ դատարանների և ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից ԱՊՊԱ ոլորտում պատվիրված փորձաքննությունների իրականացման և ցանկացած այլ տիպի բանավոր կամ գրավոր կարծիքի տրամադրման գործընթացում:

ԲԱԺԻՆ 3. ՎԵՐԱՆՈՐՈԳՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 7. ՎԵՐԱՆՈՐՈԳՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՄԲ ՏՐՎՈՂ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

22. Բյուրոյի կողմից տրվում է վերանորոգող կազմակերպության միայն մեկ տեսակի որակավորում՝ ավտոտրանսպորտային միջոցի վերանորոգում իրականացնող կազմակերպության որակավորում, որը տալիս է ապահովագրական հատուցման գործընթացի շրջանակներում ԱՊՊԱ պատահարի հետևանքով ավտոտրանսպորտային միջոցներին պատճառված ցանկացած վնասի վերականգնման իրավասություն: ԱՊՊԱ պատահարի հետևանքով այլ գույքին պատճառված վնասների վերականգնում իրականացնելու համար անձը ենթակա չէ Բյուրոյի կողմից որակավորման:

ԳԼՈՒԽ 8. ՎԵՐԱՆՈՐՈԳՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԱՀՄԱՆՎՈՂ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

23. Վերանորոգող կազմակերպություն կարող են լինել միայն իրավաբանական անձինք:

24. Անձը կարող է ապահովագրական հատուցման գործընթացի շրջանակներում ԱՊՊԱ պատահարի հետևանքով գույքին պատճառված վնասների վերականգնում իրականացնել հետևյալ պայմանների առկայության դեպքում՝

1) ունի սույն կանոններով սահմանված կարգով ստացված համապատասխան տեսակի որակավորում (սույն կանոնների համաձայն նման որակավորում պահանջվելու դեպքում),

2) ունի համապատասխան գույքի վերականգնում իրականացնելու արտոնագիր կամ լիցենզիա (համապատասխան գործունեությունը ՀՀ օրենսդրության համաձայն՝ արտոնագրման կամ լիցենզավորման ենթակա լինելու դեպքում),

3) Հայաստանի Հանրապետությունում գրանցված որևէ ապահովագրական ընկերության հետ ունի կնքված և գործող՝ իր կողմից ԱՊՊԱ ոլորտում իրականացվող բոլոր վերանորոգման աշխատանքներից բխող պատասխանատվության ռիսկը ծածկող ապահովագրության պայմանագիր (պայմանագրեր), որը (որոնք) բավարարում են սույն կետի 4-րդ ենթակետով նախատեսված պայմանագրում նշված պահանջներին,

4) վերանորոգման պատվեր տված Ապահովագրողի (Բյուրոյի) հետ ունի սույն կանոններով սահմանված տիպային օրինակին համապատասխան կնքված և գործող պայմանագիր,

5) Ապահովագրողից (Բյուրոյից) ստացել է կնքված պայմանագրին համապատասխան պատվեր:

ԳԼՈՒԽ 9. ՎԵՐԱՆՈՐՈԳՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ

25. Վերանորոգող կազմակերպության որակավորում ստանալու համար անձը Բյուրո է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝ պատասխանատվություն կրելով այդ փաստաթղթերի իսկության և դրանցում արտացոլված տեղեկությունների՝ իրականությանը համապատասխանելու համար.

1) սույն կանոնների Հավելված 1-ով սահմանված ձևով դիմում,

2) դիմողի անձը հաստատող փաստաթղթի և (ըստ կիրառելիության) ՀՎՀՀ-ն պարունակող փաստաթղթի, կանոնադրության և դիմողի անունից հանդես գալու իրավասությունը հավաստող փաստաթղթի պատճենը կամ լուսապատճենը,

3) որակավորում ստանալու համար սույն կանոններով սահմանված պահանջներին բավարարելու մասին տեղեկանք և գրավոր համաձայնություն՝ առ այն, որ Բյուրոն կամ ՀՀ կենտրոնական բանկը ցանկացած ժամանակ կարող է ստուգել նշված պահանջների առկայությունը:

26. Վերանորոգող կազմակերպության որակավորում ստանալու համար որակավորման համար դիմած անձը վերանորոգման գործունեության յուրաքանչյուր վայրի համար պետք է բավարարի հետևյալ տեխնիկական պահանջներին՝

1) շուրջօրյա և անվտանգ ավտոկայանատեղի՝ համապատասխան պահակային ծառայությամբ,

2) հատուկ առանձնացված տարածք՝ նախատեսված ավտոտրանսպորտային միջոցները ներկելու, քանդելու և հավաքելու համար,

3) պահեստային տարածք՝ նախատեսված ավտոտրանսպորտային միջոցներից ժամանակավոր հանված դետալները, հանգույցները և ագրեգատներն ապահով պահպանելու համար.

4) սարքավորում (ստենդ), որը համալրված է հիդրավլիկ և (կամ) մեխանիկական կերպով ավտոտրանսպորտային միջոցների կմախքը ձգելու համար հարմարանքով,

5) ներկման և չորացման խցիկ,

6) հեռախոսակապ:

27. Որակավորման համար դիմումը և սույն կանոնների 25-րդ կետով նախատեսված մյուս փաստաթղթերն ստանալուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, բացառությամբ սույն կանոնների 31-րդ կետով նախատեսված դեպքերի, Բյուրոն կազմակերպում է որակավորման դիմում ներկայացրած անձի տեխնիկական հագեցվածության ստուգում, որի արդյունքում դրական եզրակացություն կազմվելու դեպքում անձը համարվում է Բյուրոյի կողմից համապատասխան տեսակի որակավորումն ստացած: Ներկայացված փաստաթղթերի իսկությունը և դրանցում արտացոլված տեղեկությունների՝ իրականությանը համապատասխանելու փաստն ստուգելու նպատակով Բյուրոն կամ ՀՀ կենտրոնական բանկը կարող է պահանջել և ստուգել դրանց բնօրինակները և այլ փաստաթղթեր, որի դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը հաշվարկվում է համապատասխան փաստաթղթերը (բնօրինակները) ներկայացնելու օրվանից:

28. Վերանորոգող կազմակերպության որակավորումը տրվում է անժամկետ:

29. Սույն կանոններով նախատեսված կարգով անձին որակավորելուն հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում Բյուրոն որակավորված անձի էլեկտրոնային փոստի հասցեին է ուղարկում որակավորման վկայականի էլեկտրոնային տարբերակը, ինչպես նաև իր պաշտոնական ինտերնետային կայքի «Վերանորոգող կազմակերպություններ» բաժնում հրապարակում է որակավորված անձի անունը, ազգանունը (անվանումը) և որակավորման տեսակը: Ընդ որում, անձին տրված որակավորումը հավաստվում է նշված տեղեկատվության հրապարակմամբ:

30. Որակավորման համար դիմած և սույն կանոններով սահմանված կարգով դրական արդյունքներ չապահովված անձանց ծանուցվում է դիմումը մերժելու մասին: Սույն կետի համաձայն որակավորման դիմումի մերժում ստացած անձինք մերժման որոշումը կայացվելու պահից սկսած մեկ ամսվա ընթացքում չեն կարող կրկին դիմել Բյուրո որևէ տեսակի որակավորում ստանալու համար:

31. Բյուրոն, առանց տեխնիկական պահանջների ստուգում կազմակերպելու, համապատասխան գրությամբ մերժում է անձին որակավորման տրամադրումը, եթե՝

1) դիմումը կամ դրան կից ներկայացված փաստաթղթերը կամ դրանցում արտացոլված տվյալները լիարժեք, արժանահավատ կամ ամբողջական չեն կամ չեն համապատասխանում սույն կանոններով նախատեսված պահանջներին,

2) անձը սույն կանոնների 30-րդ կետի համաձայն իրավունք չունի դիմել որակավորման համար,

3) անձը դիմելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում զրկվել է Բյուրոյի կողմից տրված որևէ տեսակի որակավորումից:

**ԳԼՈՒԽ 10. ՎԵՐԱՆՈՐՈԳՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐՋԻՆՆԵՐԻ ՀԵՏ ԿՆՔՈՂ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ
ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՀԱՆՋՆԵՐ**

32. Վերանորոգող կազմակերպությունների հետ կնքվող պայմանագրերի տիպային օրինակները սահմանված են սույն կանոնների Հավելված 5-ով, համապատասխանաբար՝

1) Հավելված 5.1՝ ավտոտրանսպորտային միջոցի վերանորոգման պայմանագրերի տիպային օրինակ,

2) Հավելված 5.2՝ ավտոտրանսպորտային միջոցից բացի այլ գույքի վերանորոգման պայմանագրերի տիպային օրինակ:

33. Բյուրոն և Ապահովագրողները պարտավոր են ավտոտրանսպորտային միջոցի վերանորոգում իրականացնող առնվազն երեք վերանորոգող կազմակերպության հետ ունենալ սույն կանոններով սահմանված տիպային օրինակներին համապատասխան կնքված և գործող պայմանագրեր, որոնցով կծածկեն ԱՊՊԱ պատահարի հետևանքով ցանկացած տեսակի ավտոտրանսպորտային միջոցի պատճառված ցանկացած տեսակի վնասի վերանորոգման հնարավորությունը: Բյուրոն և Ապահովագրողները պարտավոր են տուժողի կողմից Բյուրոյի կանոնների համաձայն՝ ավտոտրանսպորտային միջոցից բացի այլ գույքի պատճառված վնասի վերականգնման պահանջ ներկայացվելու դեպքում երկու օրվա ընթացքում տուժողի ընտրությանը ներկայացնելու համար ապահովել առնվազն երկու վերանորոգող կազմակերպությունից կազմված ցուցակ, ով սույն կանոնների համաձայն իրավունք ունի իրականացնել համապատասխան գույքի վերականգնումը:

34. Ապահովագրողները և Բյուրոն պարտավոր են իրենց պաշտոնական ինտերնետային կայքի առաջին էջի տեսանելի մասում հրապարակել իրենց հետ համագործակցող (գործող պայմանագիր ունեցող) վերանորոգող կազմակերպությունների վերաբերյալ առնվազն հետևյալ տվյալները՝

1) անունը ազգանունը կամ անվանումը,

2) վերանորոգող կազմակերպությանը պատվիրակված վնասի վերականգնման տեսակը,

3) պայմանագրի գործողության ժամկետը:

35. Ապահովագրողները և Բյուրոն պատասխանատվություն են կրում իրենց հետ համագործակցող վերանորոգող կազմակերպությունների հետ՝ սույն կանոններին համապատասխան պայմանագրերի կնքման ապահովման գործընթացի համար և համապատասխանաբար դրա չկնքման կամ սույն կանոնների պահանջներին չհամապատասխանող պայմանագրի կնքման հետևանքով բացասական հետևանքների ռիսկերը՝ ներառյալ ֆինանսական ռիսկերը:

36. Վերանորոգող կազմակերպությունները պարտավոր են մշտապես համապատասխանել սույն կանոններով համապատասխան որակավորումն ստանալու համար սահմանված պահանջներին և լիակատար պատասխանատվություն են կրում սույն կանոններով, Բյուրոյի այլ կանոններով, ինչպես նաև սույն կանոնների համաձայն՝ իրենց հետ կնքված պայմանագրերով իրենց գործունեությանը ներկայացված պահանջների պահպանման և համապատասխանաբար դրա չպահպանման արդյունքում պատճառված վնասների հատուցման համար:

36.1 Վերանորոգող կազմակերպությունները յուրաքանչյուր տարի մինչև տվյալ տարվա մայիսի 1-ը պարտավոր են սույն կանոնների Հավելված 6-ով սահմանված ձևով Բյուրո ներկայացնել տարեկան հաշվետվություն՝ հաշվատվետվությունը ներկայացնելու օրվա դրությամբ սույն կանոններով համապատասխան որակավորումն ստանալու համար սահմանված պահանջներին համապատասխանելու վերաբերյալ:

ԲԱԺԻՆ 4. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 11. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

37. Փորձագետների և վերանորոգող կազմակերպությունների կողմից որակավորումն ստանալու համար սահմանված պահանջների, ինչպես նաև Բյուրոյի կանոններով և դրանց համաձայն՝ իրենց հետ կնքված պայմանագրերով (համաձայնագրերով) իրենց գործունեությանը ներկայացված պահանջների պահպանման նկատմամբ Բյուրոյի կողմից վերահսկողություն իրականացվում է և համապատասխանաբար պատասխանատվության միջոցներ կիրառվում են Բյուրոյի կողմից վերահսկողության գործընթացը կարգավորող համապատասխան կանոններով սահմանված կարգով:

38. Պատասխանատվության միջոցներով չպայմանավորված՝ փորձագետի և վերանորոգող կազմակերպության որակավորումը դադարում է, եթե որակավորված անձը.

1) ներկայացրել է որակավորումը դադարեցնելու կամ Բյուրոյի՝ իր գործունեությանը վերաբերող կանոններում փոփոխություններին կամ լրացումներին համաձայն չլինելու վերաբերյալ դիմում,

2) մահացել է, ոչ վերակազմավորման հիմքով վերակազմակերպվել է կամ լուծարվել է:

3) *(Ուժը կորցրել է Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրոյի խորհրդի 23/12/2021թ թիվ 48-Լ որոշմամբ):*

4) *(Ուժը կորցրել է Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրոյի խորհրդի 23/12/2021թ թիվ 48-Լ որոշմամբ):*

5) *(Ուժը կորցրել է Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրոյի խորհրդի 23/12/2021թ թիվ 48-Լ որոշմամբ):*

6) *(Ուժը կորցրել է Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրոյի խորհրդի 23/12/2021թ թիվ 48-Լ որոշմամբ):*

7) ավելի քան երկու ամիս չունի սույն կանոններով սահմանված պահանջներին բավարարող նվազագույն քանակի աշխատող և (կամ) քաղաքացիաիրավական հարաբերությունների մեջ գտնվող ֆիզիկական անձ, բացառությամբ այն դեպքերի, եթե տվյալ պահին անձը փաստացի չի իրականացնում որակավորված գործունեություն,

8) ավելի քան մեկ տարի փաստացի չի իրականացրել որակավորված գործունեությունը,

9) սահմանված ժամկետում չի ներկայացրել սույն կանոնների 36.1-րդ կետով նախատեսված հաշվետվությունը:

ԲԱԺԻՆ 5. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ԳԼՈՒԽ 12. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

39. Բյուրոն վարում է որակավորված և որակազրկված փորձագետների և վերանորոգող կազմակերպությունների, ինչպես նաև որակավորման համար դիմած, սակայն բացասական արդյունք ցուցաբերած անձանց ռեեստր:

40. Սույն կանոններով հաստատված տիպային օրինակներում նախատեսված դաշտերը ենթակա են պարտադիր լրացման: Ընդ որում՝ այդ տիպային օրինակներով նախատեսված պահանջները և գործողությունները պարտադիր են տիպային օրինակը կիրառող համապատասխան անձի (անձանց) համար:

41. Սույն կանոններն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ որակավորում ունեցող փորձագետներն ու գրանցված վերանորոգող կազմակերպություններն ինքնաշխատ համարվում են սույն կանոններով նախատեսված համապատասխան որակավորում ստացած անձինք՝ սույն կանոններով սահմանված պայմաններով: Ընդ որում, սույն կետով նախատեսված անձանց՝ սույն կանոններով սահմանված որակավորման ժամկետը հաշվարկվում է իրենց կողմից փաստացի որակավորում ստանալու օրվանից:

42. Սույն կանոնների 41-րդ կետով նախատեսված անձանց հետ Բյուրոյի և Ապահովագրողների կնքած պայմանագրերը (համաձայնագրերը) սույն կանոններն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ պետք է համապատասխանեցված լինեն սույն կանոններով սահմանված պահանջներին՝ ներառյալ նրանց հետ լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով:

43. 2019 թվականի հուլիսի 1-ի դրությամբ պատահարի առաջացման պատճառների փորձագետի որակավորում ունեցող ֆիզիկական անձինք մինչև իրենց որակավորման ժամկետի ավարտը կամ Բյուրոյի կանոնների համաձայն՝ դրա վաղաժամկետ դադարեցումը համարվում են որակավորված միաժամանակ ավտոտեխնիկի, նյութագետի և հետքաբանի մասնագիտացմամբ:

44. 2019 թվականի հուլիսի 1-ի դրությամբ պատահարի առաջացման պատճառների փորձագետի որակավորում ունեցող իրավաբանական անձանց նկատմամբ սույն կանոնների 9-րդ կետի աղյուսակ 2.2.3-ի 3-րդ կետով նախատեսված պահանջը տարածվում է 2020 թվականի հուլիսի 1-ից:

45. Սույն կանոնների 16-րդ կետով նախատեսված գնառաջարկ ներկայացնելու պահանջի ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ ԱՊՊԱ պատահարի առաջացման պատճառների փորձագետի որակավորում ունեցող իրավաբանական անձինք պարտավոր են այդ պահանջի ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ օրվա ընթացքում.

1) Բյուրո ներկայացնել սույն կանոնների 4.3-րդ հավելվածով սահմանված լրացուցիչ իրավունքների և պարտավորությունների հետ համաձայն լինելու վերաբերյալ հայտարարություն,

2) Բյուրոյին և բոլոր Ապահովագրողներին ուղարկել սույն կանոնների 16-րդ կետով նախատեսված գնառաջարկը: Ընդ որում սույն կետում նշված հայտարարության և գնառաջարկի ներկայացման պահին համապատասխան փորձագետների և Բյուրոյի և Ապահովագրողների միջև մինչև այդ կնքված ԱՊՊԱ ոլորտում պատահարի առաջացման պատճառների փորձաքննության ծառայությունների մատուցման պայմանագրերը ենթակա են երկկողմանի համաձայնությամբ դադարեցման:

46. Սույն կանոնների 45-րդ կետով նախատեսված գործողությունները նույն կետով սահմանված ժամկետներում չկատարվելու դեպքում համապատասխան փորձագետի՝

ԱՊՊԱ պատահարի առաջացման պատճառների փորձագետի որակավորումը այդ ժամկետի ավարտի պահից համարվում է դադարած: